DOI: 10.59560/18291155-2025.4-284

ԱՐՄԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Ամփոփագիր

Ժողովրդավարական հասարակությունում արգելքներն ու սահմանափակումները կիրառվում են մարդասիրական նպատակներով և հանդիսանում են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջոց: Ժողովրդավարությունն անհնար է պատկերացնել առանց մարդու իրավունքների, միևնույն ժամանակ՝ առանց տարբեր վարչական գործողությունների հետևանքով կամ դրանցից անկախ առաջացած արգելքների և սահմանափակումների:

Վարչական գործունեության արգելքներն ունեն հատուկ նշանակություն՝ որպես հասարակական կյանքի որոշակի ոլորտի բնականոն զարգացումն ապահովող ուղիներ:

Հոդվածում անդրադարձ է կատարվել վարչական գործունեության ընթացքում առաջացող «արգելք» և «սահմանափակում», ինչպես նաև «վեճ» և «տարաձայնություն», «վիճելի իրավիճակ» եզրույթների հասկացություններին՝ յուրովի մեկնաբանելով դրանց նմանություններն ու տարբերությունները, միևնույն ժամանակ դիտարկելով վարչական և այլ հանրային իրավունքի վեճերը որպես իրավական հակամարտություններ, որոնք ծագում են պետական մարմինների կամ մասնավոր սուբյեկտների միջև փոխգործակցության ոլորտում:

Հեղինակի կողմից վարչական գործունեության սահմանափակման հիմնահարցերի հետ մեկտեղ դիտարկվել են վարչական գործունեության արգելքների (սահմանափակումների) հաղթահարման ուղիները, այն է՝ վարչական գործի ամբողջական և օբյեկտիվ ուսումնասիրությունը, պետական մարմինների, հսկողություն կամ վերահսկողություն իրականացնող մարմինների հետ համագործակցությունը, վարչական մարմնում աշխատանքի արդյունավետ կազմակերպումն ու զարգացումը: Նշված ուղիները կարող են նպաստել ոչ միայն արտաքին և ներքին խոչընդոտների հաղթահարմանը, այլև վարչարարության պատշաճ իրականացման արդյունքում իրավաչափ վարչական ակտ ընդունելուն:

Հիմնաբառեր. վարչական գործունեություն, արգելք, վեճ, տարաձայնություն, սահմանափակում, հայեցողական լիազորություն, հաղթահարման ուղի:

Ներածություն

Իրավունքն այսօր խարսխված է մարդկային կենսագործունեության բոլոր ոլորտներում, հետևաբար օրենսդիրն օրենքների միջոցով կարգավորում է գրեթե ամեն հարաբերություն: Սակայն, կյանքի բազմազանությունը պայմանավորում է զանազան, միմյանց չկրկնող, տարատեսակ իրավիճակներ և դեպքեր, ուստի, անհնար է օրենքների միջոցով բոլոր իրավիճակներին տալ անհատականացված և արդարացի լուծումներ: Այդ իսկ պատճառով, օրենսդիրը վարչական կամ պետական այլ մարմիններին տալիս է հայեցողական լիազորություններ՝ կոնկրետ իրավիճակում, կոնկրետ դեպքի առանձնահատկություններին պատշաճ արձագանքելու համար[1]:

Վարչական մարմինն իր գործունեության ընթացքում անխուսափելիորեն բախվում է արգելքների (խոչընդոտների), որոնք վարչական մարմնի և նրա հետ առնչություն ունեցող անձանց, ինչպես նաև վարչական մարմնի և այլ պետական մարմինների միջև հակասությունների և բախումների արդյունք են:

Արգելքն ընդհանուր իրավական կարգավորման միջոցներից է և կարգավորող ազդեցություն ունի հասարակական հարաբերությունների վրա[2]:

Վարչաիրավական արգելքը սահմանվում է որպես սոցիալական անհրաժեշտությամբ պայմանավորված պետական-իշխանական, ընդհանուր առմամբ պարտադիր կարգի ձև և միջոց, որը նախազգուշացնում է անօրինական գործողություններ կատարելու վտանգի մասին և նպատակ ունի կանխել այն անցանկալի վարքագիծը կառավարչական հասարակական հարաբերությունների ոլորտում, որը կարող է վնաս պատճառել պետական, հասարակական կամ անձնական շահերին[3]:

Հիմնվելով ստրկատիրական, ֆեոդալական և վաղ բուրժուական պետություններում պաշտոնյաների չարաշահումների բացասական պատմական փորձի վրա՝ հասարակությունը հայտնաբերել է պետական պաշտոնյաների համար մի շարք իրավական սահմանափակումներ սահմանելու անհրաժեշտությունը, որոնց հիմնական նպատակը քաղաքացիների օրինական պաշտպանությունն է բռնակալությունից և այնպիսի վնասակար երևույթների դեմ պայքարը, ինչպիսիք են պաշտոնի չարաշահումը և պետական մարմիններում կոռուպցիան[4]:

Գիտության մեջ առկա է տեսակետ, ըստ որի՝ նույնացվում են իրավական արգելք և իրավական սահմանափակում հասկացությունները: Է.Վ. Օխոտսկին, ուսումնասիրելով քաղաքացիական ծառայողի իրավական կարգավիճակը, նշել է, որ

---

[1] *Տե՛ս* ***Szot A.*** *Discretionary Powers of the Public Administration in Law Application Processes and its Judicial*

Control, p. 1: URL: shorturl.at/pFVWY

[2] *Տե՛ս* ***Рыбушкин Н. К*** *вопросу о запрещающих нормах // Актуальные вопросы советского права: теория и практика. - Казань, 1985. - С. 19:*

[3] *Տե՛ս* ***Слепченко Ю.Н.*** *Запреты в административном праве: Дис. ... канд. юрид. наук. - 2002. - С. 190:*

[4] *Տե՛ս* ***Козбаненко В.А.*** *Правовой статус государственных гражданских служащих: структура и содержание. - М., 2003. - С. 93;* ***Костенников М.В., Куракин А.В.*** *Административно-правовые средства предупреждения и пресечения коррупции в системе государственной службы (отечественный и зарубежный аспекты). - М., 2003. - С. 121:*

պաշտոնի սահմանափակումները քաղաքական, տնտեսական և կազմակերպչական-կառավարչական գործոնների համակցություն են՝ արգելքներ, որոնք ուրվագծում են պետական ծառայողի պաշտոնական գործունեության և ամենօրյա վարքագծի թույլատրելի սահմանները: Սահմանափակումները սահմանում են սահմաններ, որոնցից այն կողմ պետությունը կա՛մ բացահայտորեն արգելում է, կա՛մ չի հաստատում կա՛մ խրախուսում[1]:

Մեր դիտարկմամբ, արգելքի միջոցով պետությունը մի դեպքում պաշտպանում է հասարակության և քաղաքացիների համար ամենակարևոր արժեքները, իսկ մյուս դեպքում պետությունն այն կիրառում է որպես սահմանափակող միջոց նույն հասարակության և քաղաքացիների նկատմամբ: Արգելքը պետության համար վարքագծի օրինական միջոց է, որն իր մեջ ներառում է նաև սահմանափակումը: Ըստ էության, սահմանափակումն իր մեջ արգելքի տարրեր է պարունակում՝ ապահովելով վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացումը, ուստի օրենսդիրը սահմանել է «հայեցողական լիազորությունների սահմանափակում» և ոչ թե «հայեցողական լիազորությունների արգելք» ձևակերպումը:

Արգելքներն ու սահմանափակումներն իրավական կարգավորման երկու տարբեր մեթոդներ են: Դրանց միջև հիմնական տարբերությունն այն է, որ արգելքներն իրենց բովանդակությամբ ցույց են տալիս իրականում հնարավոր որոշակի վարքագծի իրավական անհնարինությունը, մինչդեռ սահմանափակումը ներկայացնում է ոչ միայն իրավական, այլև փաստացի անհնարին վարքագիծ: Ի տարբերություն արգելքի, իրավական սահմանափակումը սկզբունքորեն անհնար է խախտել: Դա միշտ էլ ինչ-որ սուբյեկտիվ իրավունքի սահմանափակում է, որը ապահովվում է համապատասխան պաշտոնյաների պարտականություններով[2]: Այս մեթոդը սերտորեն կապված է հասարակական ոլորտում սոցիալական հարաբերությունների իրավական պաշտպանության հետ. այն կանխորոշում է բազմաթիվ վարչաիրավական ռեժիմների բովանդակությունը[3]: Կարգավորման նման մեթոդը կիրառվում է, երբ անհրաժեշտ է հասարակությունը պաշտպանել անցանկալի վարքագծից: Ինչպես նշվում է գիտական գրականության մեջ, իրավական արգելքը կիրառվում է արգելված գործունեության տեսակների սահմանման համար[4]:

---

[1]*Տե՛ս* ***Охотский Е.В.*** *Правовой статус государственного служащего Российской Федерации // Государство и право. 2003. N 9. - С. 17:*

[2]*Տե՛ս* ***Братко А.Г.*** *Запреты в советском праве. - Саратов, 1979. - С. 17:*

[3]*Տե՛ս Административно-правовые режимы в государственном управлении в Российской Федерации. Теория и современная практика: монография / Отв. ред. проф. А.Ф. Ноздрачев. - М., 2017:*

[4]*Տե՛ս* ***Шергин А.П.*** *К концепции механизма административно-правового регулирования // Актуальные проблемы административного и административно-процессуального права. - М., 2004. - С. 102 - 123;* ***Коннов В.А.*** *Правовые основы ограничения политических прав и свобод граждан по зарубежному и российскому законодательству. - М., 2003. - С. 15:*

Իրավական կարգավորման մեթոդները որոշում են իրավակարգավորման մեխանիզմի այլ տարրերի (նորմեր, իրավահարաբերություններ, օրենքի կիրառման ակտեր) կարգավորիչ ազդեցության բնույթն ու բովանդակությունը[1]:

Գտնում ենք, որ գիտության մեջ արգելքներն ու սահմանափակումները դիտարկվում են ոչ միայն որպես առանձին մեթոդներ, այլև վարչական մարմնի պաշտոնատար անձի օրինական կամ անօրինական վարքագծի դրսևորումներ:

Գիտնականների հիմնական ուշադրությունն այս ոլորտում միայն անօրինական վարքագծի ուսումնասիրությունն է: Այնուամենայնիվ, սոցիալական հարաբերությունների կայունությունը և օրինականությունը հիմնված են օրինական վարքագծի վրա: Օրինական վարքագիծը պետք է ուղղված լինի այնպիսի համակարգի ձևավորմանն ու պահպանմանը, որն ապահովում է առաջին հերթին այդ վարքագիծը[2]: Դրանցից յուրաքանչյուրը «կապված է ոչ միայն ապագա վարքագծի որոշակի իրավական մոդելի (իրավունքի տրամադրում, անցանկալի գործողությունների արգելում և այլն), այլ նաև իրավահարաբերությունների մասնակիցների իրավական դիրքի, հասցեատերերի շրջանակի և այլնի հետ»[3]:

Սահմանափակումներն ու արգելքներն աշխատողների (ծառայության թեկնածուների) վարքագծի այն շրջանակներն են, որոնց պահպանումը նպաստում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը կառավարման հարաբերությունների շրջանակներում, ապահովում է աշխատողի օբյեկտիվ և արդար վերաբերմունքը քաղաքացիների և կառավարման կոնկրետ հարցերի նկատմամբ[4]: Դրանք ներկայացնում են օրենքով սահմանված պահանջներ՝ ընդգրկելով աշխատողի անձը, նրա իրավական կարգավիճակը և դրսևորած վարքագիծը:

Վարչական իրավունքի տեսաբաններն արգելքներն ու սահմանափակումներն ավելի շատ դիտարկում են քաղաքացիների կողմից իրավախախտումների կատարման համար պետության սահմանած արգելքների կիրառման տեսանկյունից, օրինակ՝ ճանապարհային երթևեկության կանոններին չենթարկվելը, հրդեհային անվտանգության խախտումը կամ սանիտարական նորմերի խախտումը և այլն: Նման դեպքերում պետական մարմինները կարող են կիրառել վարչական տույժեր՝ ներառյալ տուգանքները և հարկադրանքի այլ միջոցները:

---

[1] *Տե՛ս* ***Алексеев С.С.*** *О понятии механизма правового регулирования. Механизм правового регулирования в социалистическом государстве. - М., 1966;* ***Шергин А.П.*** *Понятие и содержание механизма административно-правого регулирования // Научный портал МВД России. 2009. № 1; и др:*

[2] *Տե՛ս* ***Боляк И.Л.*** *Поведение в публично-правовой сфере. - М., 2005. - С. 3:*

[3] *Տե՛ս* ***Штатский С.В.*** *Административно-правовой запрет: сущность, формирование, проблемы реализации. - М., 2002. - С. 13:*

[4] *Տե՛ս* ***Саториус В.С.*** *Ограничения и запреты как элементы публичной власти в Российской Федерации: понятие и значение в контексте построения правового государства // Образование и право. № 12. 2023. - С. 104:*

Վարչական մարմնում արգելքների առաջացումը կարող է պայմանավորված լինել նաև ցանկացած վարչական ակտի կայացման հետ, որը կարող է բացասական հետևանքներ ունենալ անձանց կամ կազմակերպությունների համար, օրինակ՝ թույլտվություն տրամադրելուց կամ որոշակի իրավունքներ և արտոնություններ տրամադրելուց հրաժարվելը: Նման դեպքերում նշված անձինք կարող են դիմել վերադաս վարչական մարմին՝ պաշտպանելու իրենց իրավունքները և օրինական շահերը: Մինչդեռ, մեր կարծիքով, արգելքները առավել հաճախ կարող են առաջանալ վարչական մարմնի կողմից վարչարարություն իրականացնելիս, հատկապես այն դեպքերում, երբ հարցը վերաբերում է հայեցողական լիազորությունների կիրառմանը:

Վարչական գործունեության արգելքների դերի ուժեղացումը բացատրվում է մի կողմից՝ «թույլատրվում է այն ամենը, ինչ օրենքով արգելված չէ» սկզբունքով, մյուս կողմից՝ հայեցողական լիազորությունների կիրառման ընթացքում ծագած արգելքներով, որոնք հնարավորություններ են ստեղծում բացասական գործունեության ձևավորման համար: Անկախ արգելքների առկայությունից վարչական մարմինն իր գործունեությունում հիմնական շեշտադրումը պետք է դնի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վրա[1]:

Վարչական մարմնի առջև ծագած արգելքները՝ որպես հասարակական հարաբերությունները կարգավորող գործիքներ, նպատակ ունեն զսպել այն գործողությունները, որոնք կարող են վտանգ ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական անձանց օրինական իրավունքներին և շահերին:

Վարչական գործունեության արգելքների միջոցով ուրվագծվում է անընդունելի վարչական գործողությունների շրջանակը, որոշվում են ինչպես մարդու, այնպես էլ վարչական մարմնի օրինական և անօրինական վարքագծի սահմանները:

Այսինքն, վարչաիրավական հարաբերություններում արգելքները ծագում են վարչական մարմինների պաշտոնատար անձանց և սուբյեկտների միջև վարչական գործառույթներ իրականացնելու և հանրային շահերը կարգավորելու համար:

Իրավակիրառ պրակտիկայում հաճախ քննարկման առարկա է դառնում նաև վարչական վեճը և տարաձայնությունը, որը փոխկապակցվում է արգելքների հետ: Չնայած վարչական վեճի և տարաձայնության վերաբերյալ տրված մեկնաբանություններն էականորեն տարբերվում են արգելքի կամ սահմանափակման սահմանումից: Մասնավորապես՝ վարչական վեճը «վեճ» ընդհանուր տեսական կատեգորիայի ածանցյալն է[2]:

Այլ կերպ ասած՝ վարչական վեճերն այն վեճերն են, որտեղ մի կողմը միշտ հանրային սուբյեկտ է, բովանդակությունը միշտ պետական հսկողությունը կամ վերահսկողությունն է, և դա անպայմանորեն ծագում է վարչական մարմնի լիազորությունների իրականացմամբ: Հենց այս չափանիշի հիման վրա է, որ

[1]Տե՛ս https://lawtheses.com/zaprety-v-administrativnom-prave

[2]Տե՛ս **Шарова А.А.** *Административные споры: понятие и признаки, характеризующие их особенности / А. А. Шарова. - Текст: непосредственный // Молодой ученый. 2023. № 36 (483). - С. 246-250:*

վեճերի այս կատեգորիան տարբերվում է պետական մարմինների և մասնավոր սուբյեկտների միջև հակամարտություններից: Օրինակ՝ պետական պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման վերաբերյալ առաջացած վեճերը: Հետևաբար, վարչական վեճերը ցույց են տալիս իրավահարաբերությունների ուղղահայաց մոդելը[1]:

Վարչական վեճի ամենակարևոր առանձնահատկությունը նման վեճի կողմերի կազմն է: Վեճը հասկանալու մասնավոր իրավունքի մոտեցումը հիմնված է այս վեճի կողմերի իրավական հավասարության (հավասար իրավունքների) պոստուլատի վրա: Այս մոտեցումը չի կարող ընդունելի լինել վարչական վեճերի համար, քանի որ վարչական վեճերը ծագում են հասարակական իրավահարաբերություններից, որոնց մասնակիցները իրավահավասար չեն միմյանց հետ (անհավասար իրավունքներ ունեն): Վարչական վեճում, ընդհակառակը, վեճի կողմերից առնվազն մեկը, որպես ընդհանուր կանոն, ունի հանրային լիազորություններ, որոնք կարող են կիրառվել մյուս կողմի նկատմամբ[2]:

Տարաձայնությունը վիճակ է երկու կամ ավելի իրավաբանական անձանց միջև, որոնցից մեկը միշտ պետական մարմինն է կամ նրա պաշտոնատար անձը, որը բխում է իրավունքների շրջանակի փաստացի փոփոխությունից, նման փոփոխության հնարավորությունից կամ պայմանավորված է վարչական իրավահարաբերությունների սուբյեկտներից որևէ մեկի հետ վարչական վեճ ունենալու հետևանքով (կամ անգործության): Նշվածը ստեղծում է վարչական վեճերի դասակարգման անհրաժեշտություն՝ պետական կառավարման ոլորտին բնորոշ իրավական տարբերությունների բնույթի և բովանդակության առավել ամբողջական ընկալում ապահովելու համար[3]:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ արգելքները փոխհարաբերակցվում են վարչական վեճի և տարաձայնության հետ, հատկապես արգելքների հաղթահարման դեպքում, քանի որ դրանց լուծումը պայմանավորվում է վերադաս մարմնի կամ այլ պետական մարմնի, կամ աշխատակիցների և նրանց վերադասների հետ կապված տարաձայնությունների կամ անհամաձայնությունների քննարկման և լուծման հետ՝ գալով փոխադարձ համաձայնության հայեցողական լիազորությունների կիրառման հարցում:

Մեր դիտարկմամբ, վարչական իրավունքում հայեցողական լիազորությունների կիրառման դեպքում անհրաժեշտ է քննարկել նաև «վիճելի իրավիճակ» հասկացությունը, քանի որ վեճը վերաբերելի է կոնկրետ հարցին, մինչդեռ

[1] *Տե՛ս https://www.law-russia.ru/arbitraj/administrativnye-spory/*

[2] *Տե՛ս* ***Токарев О.В.*** *Административные акты: юридическое значение в системе публичного управления и обеспечение их законности // Государственная власть и местное самоуправление. 2020. N 5. - С. 29–35; Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 27 сентября 2016 года N 36 “О некоторых вопросах применения судами Кодекса административного судопроизводства Российской Федерации” // Российская газета. 2016. 3 октября:*

[3] *Տե՛ս* ***Эхин Н.В.*** *Классификация административных споров // Вестник магистратуры. 2019. № 6-3(93) УДК 342.9. - С. 94:*

հայեցողական լիազորությունների կիրառման դեպքում այն ավելի շուտ ստեղծում է «վիճելի իրավիճակ», երբ առաջացած հարցերը կարծիքների և մեկնաբանությունների տեղիք են տալիս: Այսինքն, «վիճելի իրավիճակում» առկա չէ հստակ օրենսդրական կարգավորում, հետևաբար այն անորոշ է և դրա լուծումը պետք է բխեցնել միջազգային փորձի ուսումնասիրությունից, իրավակիրառ պրակտիկայից, ինչպես նաև այդ իրավիճակի վերաբերյալ ձևավորված մեկնաբանություններից:

Վարչական իրավունքում արգելքները հանգամանքների ամբողջությունն են, որը նվազեցնում է վարչարարության իրականացման արդյունավետությունը՝ բարդացնելով հայեցողական լիազորությունների կիրառումը, ինչպես նաև վարչական մարմնի կողմից մարդու օրինական շահերի բավարարմանն ուղղված իրավական պարտավորությունների կատարումը:

Մեր կարծիքով, վարչարարության իրականացման ընթացքում առաջացած արգելքները կարելի է բաժանել արտաքինի և ներքինի: Արտաքին արգելքները վարչական մարմնի կամքից անկախ հանգամանքների կամ այլ մարմինների գործողությունների հետևանքով առաջացած խոչընդոտներն են, որոնք վարչական մարմնին զրկում են պատշաճ վարչարարություն իրականացնելու հնարավորությունից:

Այսպես, արտաքին արգելքներից առանձնացնենք որևէ ոլորտում քաղաքականություն մշակող մարմնից հայեցողական լիազորությունների կիրառման վերաբերյալ դիրքորոշում ստանալը, որը հակասություն է ստեղծում արդեն իսկ ձևավորված մոտեցմանը կամ լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու անհրաժեշտությունը, կամ օրենքում ամրագրված դրույթի անհստակությունը և այլն: Օրինակ, կոնկրետ իրավիճակում հայեցողական լիազորությունների կիրառման հարցում վերադաս վարչական մարմնի պաշտոնատար անձն ունի այլ դիրքորոշում, իսկ անմիջական կիրառող մարմինը՝ այլ: Նշված արգելքների խախտումն ուղղակիորեն հանգեցնում է վարչարարության սկզբունքների փոխգործակցության աղճատմանը՝ խաթարելով հայեցողական լիազորությունների կիրառմամբ վարչական ակտ ընդունելուն ուղղված ողջ գործընթացը:

Ներքին արգելքները վարչական մարմնի ներսում ծագած այն խոչընդոտներն են, որոնք վարչական մարմնի պաշտոնատար անձից բավարար գիտելիքներ են պահանջում ստեղծված իրավիճակում կողմնորոշվելու համար:

Ներքին արգելքները հակասություն են ստեղծում անմիջապես վարչական մարմնի ներսում՝ բացասական ազդեցություն ունենալով հայեցողական լիազորությունների կիրառման հարցում: Օրինակ, վարչական մարմնում առկա չէ մեկ միասնական մոտեցում հայեցողական լիազորությունների կիրառման մասով և պաշտոնատար անձը սեփական պատասխանատվությամբ պետք է ընտրություն կատարի դրանց միջև կամ վարչական մարմնում բացակայում է կամային պատրաստվածությունն օրենսդրի առաջադրած նպատակին հասնելու համար և այլն:

Այսպես, վարչական գործունեության իրականացման արգելքների առկայությունը հանգեցնում է իրավաչափ վարչարարության խաթարմանը՝

ստեղծելով անբավարար պայմաններ վարչական մարմնի կողմից վարչական ակտի ընդունման համար: Հետևաբար, վարչական գործունեության անխոչընդոտ իրականացումը՝ պայմանավորված արտաքին և ներքին արգելքների հաղթահարմամբ, ունի առանցքային և էական նշանակություն իրավաչափ վարչական ակտ ընդունելու համար, իսկ վարչական մարմինը պարտավոր է նախքան վարչական ակտ ընդունելը միջոցներ ձեռնարկել այդ արգելքները վերացնելու ուղղությամբ:

Վերոգրյալից ելնելով՝ հարկ է նկատել, որ արտաքին և ներքին արգելքները մի կողմից ունեն բացասական բնույթ, ինչպես մարդու, այնպես էլ վարչական մարմնի համար, քանի որ դրանք թույլ չեն տալիս մարդուն օգտվել իր իրավունքներից և օրինական շահերից, իսկ վարչական մարմինը հնարավորություն չի ունենում իրականացնել պատշաճ վարչարարություն: Միևնույն ժամանակ, այդ արգելքները պատճառ են վարչական մարմնի կողմից վարչարարության սկզբունքների խախտման համար՝ նվազեցնելով դրանց ազդեցության արդյունավետությունը: Սակայն, վարչական իրավունքում հայեցողական լիազորությունների կիրառման հարցում դրանք կարող են նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը: Մասնավորապես՝ հայեցողական լիազորությունների կիրառման շուրջ ի հայտ եկած արտաքին և ներքին արգելքների լուծման շրջանակում տարբեր քննարկումներն ու մեկնաբանությունները կարող են առավել բարենպաստ դարձնել հետագայում կայացվելիք վարչական ակտը, եթե վարչական մարմինը դրանց արդյունքում փոխի իր մոտեցումը հայեցողական լիազորությունների կիրառման հարցում՝ հօգուտ մարդու իրավունքների ու օրինական շահերի: Հետևաբար՝ վարչական գործունեության ընթացքում ծագող արտաքին և ներքին արգելքները մի դեպքում խոչընդոտում են վարչական մարմնի գործունեության ժամանակին և պատշաճ իրականացմանը, մյուս դեպքում՝ նպաստում հայեցողական լիազորությունների կիրառման արդյունավետության բարձրացմանը:

Եզրակացություն

Այսպիսով, վարչական գործունեության արգելքները կանխում են պետության կողմից հաստատված ընդհանուր պարտադիր վարքագծի կանոնների խախտումները, մյուս կողմից՝ երաշխավորում են սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների պահպանումը, որը մաս է կազմում ժամանակակից հասարակական հարաբերությունների կատարելագործմանը: Այս առումով հատուկ ուշադրություն պետք է դարձնել իրավաչափ գործունեությանը՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հարգման սահմանադրական սկզբունքին, ինչպես նաև անհատի իրավունքների, ազատության և արժանապատվության պաշտպանությանն ու երաշխիքներին վերաբերող միջազգային իրավական ակտերին համապատասխանության հարցին:

Վարչական մարմնի գործունեության ընթացքում առաջացած, հայեցողական լիազորությունների կիրառմամբ պայմանավորված արտաքին և ներքին արգելքներն անկախ դրանց դրական կամ բացասական բնույթից ենթակա են լուծման, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր է խոսել իրավաչափ

վարչարարության իրականացման և պատշաճ վարչական ակտ ընդունելու կամ այդպիսին չընդունելու մասին:

Վարչական մարմնի կողմից արգելքների հաղթահարմամբ որոշվում է վարչական մարմնի անցանկալի վարքագիծը: Վարչական արգելքների հաղթահարումը պայմանավորված է հասարակության և պետության շահագրգռվածությամբ՝ պահպանելով այն հարաբերությունները, որոնք զարգանում են հասարակական-իրավական ոլորտում: Վարչական գործունեության արգելքը լայն կիրառություն ունի, հատկապես հայեցողական լիազորությունների կիրառման դեպքում, որը կարող է վերաբերել նաև այն սոցիալական հարաբերություններին, որոնք առնչվում են վարչական իրավունքով կարգավորվող հարաբերություններին:

Նախևառաջ, վարչական մարմինը հայեցողական լիազորությունների կիրառման ընթացքում ծագած արգելքների լուծման համար պարզում է, թե ինչն է հիմք հանդիսացել արգելքների առաջացման համար և որոնք են դրանց հաղթահարման ուղիները՝ հնարավորության դեպքում բավարարելով այն շահերը, որոնք հնարավոր է խախտվեն հայեցողական լիազորությունների կիրառմամբ:

Արտաքին և ներքին արգելքների հաղթահարման հարցում վարչական մարմինը պետք է կարևորի օբյեկտիվությունը, մասնավորապես՝ վարչական մարմինը պետք է օբյեկտիվ մոտեցում ցուցաբերի հարցին՝ չդրսևորելով անձնական շահ կամ այլ շահագրգռվածություն՝ անաչառությամբ գնահատելով հայեցողական լիազորությունների կիրառման ընթացքում առաջացած արգելքների լուծման հնարավորությունները:

Վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների կիրառման ընթացքում արգելքների վերացման հարցում էական նշանակություն ունեն վարչական մարմնի պաշտոնատար անձի և աշխատակազմի իմացության մակարդակը: Կարևորելով այս հանգամանքը՝ իրավաբան գիտնականներից շատերն արգելքն ու սահմանափակումը պայմանավորել են վարչական մարմնի աշխատակիցների վարքագծի շրջանակով:

Վարչական մարմնի պաշտոնատար անձի և աշխատակիցների իրավական կրթության և վերապատրաստման հզոր ներուժը կարող է բարձրացնել վերջիններիս իրավագիտակցության մակարդակը՝ հնարավորություն տալով լուծել հայեցողական լիազորությունների կիրառմամբ ծագած արգելքները, քանի որ դրանց չհաղթահարելը հանգեցնում է լուրջ հետևանքների վարչական մարմնի համար՝ ընդհուպ մինչև մարդու իրավունքների և օրինական շահերի կոպիտ խախտումների: Պետության ողջ կրթական, գաղափարական և քաղաքական ներուժը պետք է ներդրվի նաև վարչական գործունեության արգելքների հաղթահարմանը՝ ձևավորելով հարգալից վերաբերմունք վարչական մարմնի պաշտոնատար անձի կողմից հայեցողական լիազորությունների կիրառմամբ սեփական գործունեության և դրանից բխող մարդու իրավունքների և օրինական շահերի նկատմամբ:

Վարչական իրավունքում հայեցողական լիազորությունների կիրառման արդյունավետությունը պայմանավորված է տարբեր օբյեկտիվ գործոններով, այդ

թվում՝ նաև վարչական գործունեության արգելքների հաղթահարմամբ: Կարևորելով նշված արգելքների հաղթահարումը՝ ներկայացնենք վարչարարության ընթացքում առաջացած արտաքին և ներքին արգելքների հաղթահարման ուղիները: Դրանք են.

1. վարչական գործի ամբողջական և օբյեկտիվ ուսումնասիրությամբ վարչական վարույթի հարուցման և ընթացիկ փուլերում վարչական մարմինը պարզում է ձեռք բերված նյութերի բավարար լինելը, որն առաջնային նշանակություն ունի վարչական ակտի կայացման հարցում: Ներկայացված նյութերի կատարված ուսումնասիրությունից պարզ են դառնում այն արգելքները, որոնք հաղթահարման կարիք ունեն: Միևնույն ժամանակ վարչական վարույթի նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ժամանակին ձեռք բերել լրացուցիչ փաստաթղթեր: Այն վարչական մարմնի կողմից պետք է կատարվի օբյեկտիվ և ամբողջական ձևով՝ բացառելով անձնական շահագրգռվածությունը, քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր կայացնել իրավաչափ վարչական ակտ:

Ավելին, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության ժամանակ ծագած արգելքների ժամանակին բացահայտումը նվազեցնում է վարչական մարմնի կողմից հետագայում սխալ վարչական ակտ կայացնելու հավանականությունը:

Հայեցողական լիազորությունների կիրառմամբ վարչական ակտ կայացնելու դեպքում վարչական մարմինը, ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, ձևավորում է իր ներքին համոզմունքը՝ հիմք ընդունելով օբյեկտիվ և ամբողջական ուսումնասիրությունը՝ առաջնահերթ համարելով մարդու իրավունքներն ու օրինական շահերը: Հետևաբար, որքան մանրակրկիտ են ուսումնասիրվում նյութերը, այնքան մեծ է առաջացած խոչընդոտների հաղթահարման ուղիներ գտնելու հավանականությունը:

Հայեցողական լիազորությունների կիրառման պարագայում վարչական մարմինը պետք է ոչ միայն օբյեկտիվ և բազմակողմանի ուսումնասիրություն կատարի, այլև պարզի, թե արդյոք վարչական մարմնում արդեն իսկ առկա է առաջացած խոչընդոտի լուծմամբ կայացված վարչական ակտ, որպեսզի հնարավորություն ստեղծվի որոշել նաև հայեցողական լիազորությունների միատեսակ կիրառման հարցը: Նախկինում նման իրավիճակներում ձեռք բերված փորձի ուսումնասիրությունն այսօր հնարավորություն է տալիս կողմնորոշվել հայեցողական լիազորությունների կիրառման դիրքորոշման հարցում՝ հաղթահարելով արտաքին և ներքին արգելքները:

2. Վարչական մարմինը վարչական գործի ամբողջական և օբյեկտիվ ուսումնասիրությունից հետո առաջացած արգելքների հաղթահարման համար կարող է համագործակցել այլ պետական մարմինների, հսկողություն կամ վերահսկողություն իրականացնող մարմինների հետ՝ քննարկելով արգելքների հաղթահարման հնարավոր ուղիները:

Համագործակցությունն այլ մարմինների հետ հնարավորություն է տալիս վարչական մարմնին հայեցողական լիազորությունների կիրառման նպատակով ուսումնասիրել այլ մարմինների կողմից առաջարկված տեսակետները և մեկնաբանությունները, որոնք կարող են հիմք հանդիսանալ արտաքին և ներքին

արգելքների հաղթահարման համար՝ հիմքում դնելով մարդու իրավունքներն ու օրինական շահերը: Օրինակ, ստորադաս վարչական մարմնին (նախարարության ենթակա մարմինը) օրենքով հնարավորություն է տրվում հայեցողական լիազորություններ կիրառել, սակայն վարչական վարույթի նյութերի և նախկինում ձեռք բերված փորձի ուսումնասիրությունից ելնելով՝ ստորադաս վարչական մարմինը չի կարողանում որոշել հայեցողական լիազորությունների կիրառման հարցը, հետևաբար գրություն է ներկայացնում վերադաս մարմնին (նախարարությանը)՝ խնդրելով նրա դիրքորոշումը տվյալ հարցի վերաբերյալ:

3. Վարչական մարմնում աշխատանքի արդյունավետ կազմակերպումն ուղղված է վարչական մարմնի աշխատակազմի գործողությունների առավել հստակ կանոնակարգմանը, որը ենթադրում է արհեստավարժ աշխատակիցներին ժամանակին հանձնարարականներ տալու միջոցով հնարավոր լուծումներ փնտրել արտաքին և ներքին արգելքների հաղթահարման ուղղությամբ՝ դիտարկելով վերջիններիս մեկնաբանություններն ու առաջարկները: Վարչական մարմնի խնդիրն է հետևողական լինել աշխատանքի ճիշտ բաժանում իրականացնելու հարցում՝ հանձնարարելով փնտրել հայեցողական լիազորությունների կիրառմամբ առաջացած արգելքների հաղթահարման ուղիներ:

Վարչական մարմնում աշխատանքի կազմակերպման արդյունավետությունն ամբողջությամբ իր նպատակին կարող է ծառայել այն դեպքում, երբ վարչական մարմնի համակարգված գործունեության արդյունքում բացահայտվել են հայեցողական լիազորությունների կիրառման ընթացքում ծագած արտաքին և ներքին արգելքների հաղթահարման լուծումները, որոնք բխում են մարդու իրավունքներից և օրինական շահերից:

Վերոնշյալ դիտարկումներից ելնելով՝ գտնում ենք, որ վարչական գործի ամբողջական և օբյեկտիվ ուսումնասիրության, պետական մարմինների, հսկողություն կամ վերահսկողություն իրականացնող մարմինների հետ համագործակցության, վարչական մարմնում աշխատանքի արդյունավետ կազմակերպման և զարգացման ուղիները կարող են նպաստել ոչ միայն արտաքին և ներքին խոչընդոտների հաղթահարմանը, այլև վարչարարության պատշաճ իրականացման արդյունքում իրավաչափ վարչական ակտ ընդունելուն: Հարկ է նկատել, որ վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների կիրառման ընթացքում առաջացած արգելքների հաղթահարումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն վարչական մարմնի համար, այլև մարդու իրավունքների և ազատությունների պահպանման մասով, ինչպես նաև դրանք կարգավորում և պաշտպանում են հասարակական կյանքի հիմնական ոլորտները և ապահովում օրինականությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Алексеев С.С.** О понятии механизма правового регулирования. Механизм правового регулирования в социалистическом государстве. - М., 1966; **Шергин А.П.**

Понятие и содержание механизма административно-правового регулирования // Научный портал МВД России. 2009. № 1; и др.

2. Административно-правовые режимы в государственном управлении в Российской Федерации. Теория и современная практика: монография / Отв. ред. проф. А.Ф. Ноздрачев. - М., 2017.

3. **Боляк И.Л.** Поведение в публично-правовой сфере. - М., 2005.

4. **Братко А.Г.** Запреты в советском праве. - Саратов, 1979.

5. **Саториус В.С.** Ограничения и запреты как элементы публичной власти в Российской Федерации: понятие и значение в контексте построения правового государства // Образование и право. 2023. № 12.

6. **Слепченко Ю.Н.** Запреты в административном праве: Дис. ... канд. юрид. наук. 2002.

7. **Рыбушкин Н.** К вопросу о запрещающих нормах // Актуальные вопросы советского права: теория и практика. - Казань, 1985.

8. **Козбаненко В.А.** Правовой статус государственных гражданских служащих: структура и содержание. - М., 2003; **Костенников М.В., Куракин А.В.** Административно-правовые средства предупреждения и пресечения коррупции в системе государственной службы (отечественный и зарубежный аспекты). - М., 2003.

9. **Охотский Е.В.** Правовой статус государственного служащего Российской Федерации // Государство и право. 2003. N 9.

10. **Шергин А.П.** К концепции механизма административно-правового регулирования // Актуальные проблемы административного и административно-процессуального права. - М., 2004; **Коннов В.А.** Правовые основы ограничения политических прав и свобод граждан по зарубежному и российскому законодательству. - М., 2003.

11. **Штатский С.В.** Административно-правовой запрет: сущность, формирование, проблемы реализации. - М., 2002.

12. **Шарова А.А.** Административные споры: понятие и признаки, характеризующие их особенности / А.А. Шарова. – Текст: непосредственный // Молодой ученый. 2023. № 36 (483).

13. **Токарев О.В.** Административные акты: юридическое значение в системе публичного управления и обеспечение их законности // Государственная власть и местное самоуправление. 2020. N 5; Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 27 сентября 2016 года N 36 “О некоторых вопросах применения судами Кодекса административного судопроизводства Российской Федерации” // Российская газета. 2016. 3 октября.

14. **Эхин Н.В.** Классификация административных споров // Вестник магистратуры. 2019. № 6-3(93) УДК 342.9.

15. **Szot A.** Discretionary Powers of the Public Administration in Law Application Processes and its Judicial Control, p. 1: URL: shorturl.at/pFVWY:

16. https://lawtheses.com/zaprety-v-administrativnom-prave

17. https://www.law-russia.ru/arbitraj/administrativnye-spory/

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ ОГРАНИЧЕНИЯ АДМИНИСТРАТИВНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Аннотация

В демократическом обществе запреты и ограничения применяются в гуманных целях и являются средством защиты прав и свобод человека. Демократию невозможно представить без прав человека, а вместе с тем и без запретов и ограничений, возникающих в результате различных административных действий или независимо от них.

Запреты на административную деятельность имеют особое значение как способы обеспечения нормального развития определенной сферы общественной жизни.

В статье рассматриваются понятия «запрет» и «ограничение», возникающие в ходе административной деятельности, а также термины «спор» и «разногласие», «спорная ситуация», по-своему трактуются их сходства и различия, при этом административные и иные публично-правовые споры рассматриваются как правовые конфликты, возникающие в сфере взаимодействия государственных органов или частных лиц.

Наряду с вопросами ограничения административной деятельности автором рассмотрены способы преодоления препятствий (ограничений) административной деятельности, а именно: полное и объективное изучение административного дела; взаимодействие с государственными органами, органами, осуществляющими контроль или надзор; эффективная организация и построение работы в административном органе. Указанные способы могут способствовать не только преодолению внешних и внутренних препятствий, но и принятию законного административного акта в результате надлежащего осуществления администрирования.

Ключевые слова: административная деятельность, запрет, спор, несогласие, ограничение, дискреционная власть, способ преодоления.

KEY ISSUES OF ADMINISTRATIVE ACTIVITY RESTRICTIONS

Annotation

In a democratic society, prohibitions and restrictions are applied for humanitarian purposes and are a means of protecting human rights and freedoms. Democracy cannot be imagined without human rights, and at the same time without

prohibitions and restrictions arising as a result of various administrative actions or independently of them.
Prohibitions on administrative activity are of particular importance as a means of ensuring the normal development of a certain sphere of public life.
The article examines the concepts of “prohibition” and “restriction” arising in the course of administrative activity, as well as the terms “dispute” and “disagreement”, “disputable situation”, interprets their similarities and differences in their own way, while administrative and other public-law disputes are considered as legal conflicts arising in the sphere of interaction between state bodies or private individuals.
Along with the issues of limiting administrative activity, the author examines ways to overcome obstacles (restrictions) to administrative activity, namely: a full and objective study of the administrative case, interaction with government agencies, bodies exercising control or supervision, effective organization and construction of work in the administrative body. The specified methods can contribute not only to overcoming external and internal obstacles, but also to the adoption of a legal administrative act as a result of proper administration.
Keywords: administrative activity, prohibition, dispute, disagreement, restriction, discretionary power, method of overcoming.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 14.05.2025 թ., տրվել է գրախոսության 10.10.2025 թ., ընդունվել է տպագրության 15.10.2025 թ.: